**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի  Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**
**Շ Ի Ր Ա Կ Ի  Մ Ա Ր Զ**
**Գ Յ Ո Ւ Մ Ր Ի  Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի  Ղ Ե Կ Ա Վ Ա Ր**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» դեկտեմբերի 2022 թվականի N 2674 Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑ 85 ՇԵՆՔ N 2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴԻ ՏԱՆԸ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 87,63 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 42,83 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (35,71ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոց 85 շենք N 2 հասցեի բնակելի ֆոնդի տանը կից ինքնակամ զբաղեցրած 87,63 (ութսունյոթ ամբողջ վաթսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված են 42,83 (քառասուներկու ամբողջ ութսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (35,71(երեսունհինգ ամբողջ յոթանասունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինություններ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի և հաշվի առնելով, որ հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60- րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոց 85 շենք N 2 հասցեի բնակելի ֆոնդի տանը կից ինքնակամ զբաղեցրած 87,63 (ութսունյոթ ամբողջ վաթսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 42,83(քառասուներկու ամբողջ ութսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (35,71(երեսունհինգ ամբողջ յոթանասունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունները համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած Հայկ Տեր-Մարգարյանին:

3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):

4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

06.12.2022

X

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք.Գյումրի 2022 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## ՈՐՈՇՈՒՄ

«06» դեկտեմբերի 2022 **թվականի** N 2673 Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՒՍԵՐԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԳԱՎԱԹԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության սուսերամարտի ֆեդերացիայի 2022 թվականի դեկտեմբերի 7–9-ը Երևան քաղաքում կայանալիք գավաթի առաջնությանը Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով սուսերամարտի ֆեդերացիայի 2022 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշաման 2-րդ մասի կետի <<ա>> ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 6-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության սուսերամարտի ֆեդերացիայի գավաթի առաջնությանը մասնակցելու համար 2022 թվականի դեկտեմբերի 7–9-ը քաղաք Երևան գործուղել թվով 14 (տասնչորս) անձանց:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2022 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2022 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«06» դեկտեմբերի 2022 **թվականի** N 2672-Ա

## Կ.ՄԵՋԼՈՒՄՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԱԶԱՏ ՈՃԻ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀՈՒՇԱՄՐՑԱՇԱՐԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Կ.Մեջլումյանի հիշատակին նվիրված ազատ ոճի ըմբշամարտի 2022 թվականի դեկտեմբերի 7–9-ը Երևան քաղաքում կայանալիք միջազգային հուշամրցաշարի Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով ըմբշամարտի ֆեդերացիայի 2022 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 2-րդ մասի կետի <<ա>> ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 6-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Կ.Մեջլումյանի հիշատակին նվիրված ազատ ոճի ըմբշամարտի միջազգային հուշամրցաշարի մասնակցելու համար 2022 թվականի դեկտեմբերի 7–9-ը Երևան քաղաքում գործուղել թվով 17 (տասնյոթ) անձանց:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2022 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2022 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«06» դեկտեմբերի 2022 **թվականի** №2671-Ա

**ԳՅՈՒՄՐԻ Ք. Ա. ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 14.41 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387- Ն որոշմամբ հաստատված կարգի 28-րդ կետի 3-րդ ենթակետերով, 29-րդ կետի 1-ին ենթակետով, 34-րդ կետով և հիմք ընդունելով հողամասի տեղաբաշխման սխեման ու հատակագիծը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի ք. Ա. Շիրակացու փողոցի հարևանությամբ գտնվող 14.41 քմ մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝

**ԳՅՈՒՄՐԻ Ք., Ա. ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ, 54/19:**

Недействительная подпись

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2022թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«06» դեկտեմբերի 2022 **թվականի** № 2670-Ա

**ԳՅՈՒՄՐԻ Ք. ՎԱՐԴ-ԲԱՂ 3-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ 6 ՇԵՆՔ 30 ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԲՆԱԿԱՐԱՆԸ (ՎԿԱՅԱԿԱՆ N 25112022-08-0059) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Մերի Մնացականյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №22760 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի ք. Վարդ-Բաղ 3-րդ թաղամաս 6 շենք 30 հասցեագրությամբ բնակարանը (վկայական N 25112022-08-0059) վերահասցեավորել՝

**ԳՅՈՒՄՐԻ Ք., ՎԱՐԴ-ԲԱՂԻ 1-ԻՆ Մ/Շ 3-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ, 6 ՇԵՆՔ, 30:**

Недействительная подпись
X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2022թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«06» դեկտեմբերի 2022 **թվականի** №2669Ա

**ԳՅՈՒՄՐԻ Ք. ԿՐՈՒՊՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ 3Ա-3Բ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ (ՎԿԱՅԱԿԱՆ N2473264) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Գևորգ Խաչատրյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №22857 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի ք. Կրուպսկայա փողոց 3ա-3բ հասցեագրությամբ բնակելի տունը (վկայական N2473264) վերահասցեավորել՝

**ԳՅՈՒՄՐԻ Ք., Խ. ԴԱՇՏԵՆՑԻ ՓՈՂՈՑ, 3/3:**

Недействительная подпись
X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2022թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» դեկտեմբերի 2022 **թվականի** №2668Ա

**ԳՅՈՒՄՐԻ Ք. Պ. ՊՌՈՇՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 213.45 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387- Ն որոշմամբ հաստատված կարգի 28-րդ կետի 3-րդ ենթակետերով, 29-րդ կետի 1-ին ենթակետով, 34-րդ կետով և հիմք ընդունելով հողամասի տեղաբաշխման սխեման ու հատակագիծը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի ք. Պ. Պռոշյան փողոցի հարևանությամբ գտնվող 213.45 քմ մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝

**ԳՅՈՒՄՐԻ Ք., Պ. ՊՌՈՇՅԱՆ ՓՈՂՈՑ, 42/2**

Недействительная подпись

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2022թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

<<06>> դեկտեմբերի 2022 թվականի N 2667-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻԻ << ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՔՐԻՍՏԻՆԵ ՄԽԻԹԱՐԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 163-րդ հոդվածով և հիմք ընդունելով Քրիստինե Մխիթարի Սահակյանի 2022 թվականի դեկտեմբերի 01-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրիի << Կենտրոնական գրադարան >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Քրիստինե Մխիթարի Սահակյանին տրամադրել 2022 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 2022 թվականի դեկտեմբերի 26-ից:

**2.** Ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 5 աշխատանքային օր՝ 2022 թվականի դեկտեմբերի 26-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30–ը ներառյալ:

**3.** Ամենամյա նվազագույն արձակուրդի ընթացքում Քրիստինե Մխիթարի Սահակյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության գիտ. քարտուղար Ասյա Գեղամի Ղարիբյանին:

**4.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Քրիստինե Մխիթարի Սահակյանին և Ասյա Գեղամի Ղարիբյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

06.12.2022

X

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» դեկտեմբերի 2022 **թվական** N 2666-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱԼՎԱՐԴ ԱՐՏԱՇԻ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ,ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՄՎԵԼԻ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ, ԹԱԳՈՒՀԻ ՍԱՄՎԵԼԻ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## I ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Ալվարդ Արտաշի Թորոսյանը (նույնականացման քարտ՝ 001862259, տրված՝ 17.03.2014թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք.Գյումրի Մ.Ավետիսյան փող.9 շենք 53 բնակարան հասցեում), (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2022 թվականի նոյեմբերի 15-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Մ.Ավետիսյան փողոց 9 շենք թիվ 53 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Գյումրու քաղաքապետի 1997 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 841 որոշմամբ Մինաս Ավետիսյան 9 շենքի թիվ 53 բնակարանը որպես ծառայողական հատկացվել է Սամվել Թորոսյանի չորս անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, կնոջը, տղային,աղջկան և տրվել թիվ 53 միասնական օրդերը:

Քաղաքացի Սամվել Հովհաննեսի Թորոսյանը մահացել է 2011 թվականի նոյեմբերի 11-ին (հիմք՝մահվան վկայական ԱԲ 231838):

Դիմումին կից ներկայացվել է Գյումրու քաղաքագլխի 1997թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 841 որոշմամբ տրված թիվ 53 միասնական օրդերը, բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ 2022 թվականի նոյեմբերի 1-ի թիվ 2201620161241,«Նոր Անի» համատիրության 2022 թվականի նոյեմբերի 3-ի «02» 001 տեղեկանքները, Ալվարդ Արտաշի Թորոսյանի, Թագուհի Սամվելի Թորոսյանի նույնականացման քարտերի, Հովհաննես Սամվելի Թորոսյանի անձնագրի պատճենները, ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության 2022 թվականի նոյեմբերի 1-ի N 67/12-6499 գրությունը::

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2 -րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2022 թվականի նոյեմբերի15 -ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2022 թվականի դեկտեմբերի 1-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Ալվարդ Արտաշի Թորոսյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

## II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

ա) Գյումրի համայնքի Մ.Ավետիսյանի 9 շենք թիվ 53 հասցեի 42.45 (քառասուներկու ամբողջ քառասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ 1377386 վկայական):

բ) Գյումրի համայնքի Մ.Ավետիսյանի 9 շենք թիվ 53 հասցեի բնակարանը 1997 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ Գյումրու քաղաքապետի 1997թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 841 որոշում ):

գ) Շիրակ Գյումրի Մ.Ավետիսյան փ. 9շենք 53 հասցեում հաշվառված բնակվում են՝ Ալվարդ Արտաշի Թորոսյանը 1999 թվականից, Թագուհի Սամվելի Թորոսյանը 2013 թվականից, Հազիկ Կոլյայի Մարկոսյանը 2013 թվականից, Գևորգ Հազիկի Մարկոսյանը 2021 թվականից (հիմք՝ բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ 2022 թվականի նոյեմբերի 1-ի թիվ 2201620161241, «Նոր Անի» համատիրության 2022 թվականի նոյեմբերի 3-ի «02» 001 տեղեկանքներ) :

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հասաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ՝ Ալվարդ Արշակի Թորոսյանի, Հովհաննես Սամվելի Թորոսյանի, Թագուհի Սամվելի Թորոսյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թ.մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացիների կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի ձեռքբերման կամ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ, (հիմք՝ 2022 թվականի նոյեմբերի 9-ի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ N ԱՏ- 09112022-99-0205, N ԱՏ-09112022-99-0189, 2022 թվականի նոյեմբերի 11-ի N ԱՏ-11112022-99-0267 տեղեկանքներ):

ե) Քաղաքացի Ալվարդ Արտաշի Թորոսյանի ընտանիքը Գյումրի համայնքի Մ.Ավետիսյանի 9 շենք թիվ 53 հասցեի բնակարանը վարձակալել է 1997 թվականի դեկտեմբերի 19-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

**2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, անհրաժեշտ է քաղաքացի Ալվարդ Արտաշի Թռոյանի դիմումը բավարարել:

## III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ,24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Գյումրի համայնքի Մ.Ավետիսյանի 9 շենք թիվ 53 հասցեի 42.45 (քառասուներկու ամբողջ քառասունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝
   1) Ալվարդ Արտաշի Թորոսյանին ծնված՝ 1954 թվականին,
   2) Հովհաննես Սամվելի Թորոսյանին ծնված՝ 1978 թվականին,
   3) Թագուհի Սամվելի Թորոսյանին ծնված՝ 1972 թվականին

   որպես ընդհանուր բաժնային սեփականություն:
2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել քաղաքացներ Ալվարդ Արտաշի Թորոսյանի, Թագուհի Սամվելի Թորոսյանի, Հովհաննես Սամվելի Թորոսյանի հետ նվիրատվության պայմանագրի կնքման համար ներկայացուցիչ:
3. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ
   Ալվարդ Արտաշի Թորոսյանին, Թագուհի Սամվելի Թորոսյանին, Հովհաննես Սամվելի Թորոսյանին :
4. Քաղաքացիներ Ալվարդ Արտաշի Թորոսյանին, Թագուհի Սամվելի Թորոսյանին , Հովհաննես Սամվելի Թորոսյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Ալվարդ Արտաշի Թորոսյանին, Թագուհի Սամվելի Թորոսյանին,Հովհաննես Սամվելի Թորոսյանին պատշաճ կարգով իրազեկման հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2022թիվ Գյումրի համայնք**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» դեկտեմբերի 2022 **թվական** N 2665Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՎԱՐՍԵՆԻԿ ՌԱԶՄԻԿԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ,ՍԻՄՈՆ ԱԶԱՏԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ, ԱԼՎԱՐԴ ԱԶԱՏԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ,ԱՆԱՀԻՏ ԱԶԱՏԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### I ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Իրինա Արամայիսի Եղիազարյանը (նույնականացման քարտ՝ 000758516, տրված՝ 03.12.2012թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի Խ.Հայրիկ խճուղի սիմոֆոր 21 շենք 12 բնակարան հասցեում), որը լիազորագրով հանդես է գալիս քաղաքացի Վարսենիկ Ռազմիկի Ասատրյանի անունից (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2022 թվականի նոյեմբերի 4-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով ք. Գյումրի Անի թաղամաս 11փողոց 1 շենք թիվ 15 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել Վարսենիկ Ռազմիկի Ասատրյանի ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Լենինականի մոսկովյան շրջանային սովետի գործադիր կոմիտեի 1990 թվականի օգոստոսի 23-ի թիվ 14 որոշմամբ Անի թաղամաս 11 փողոց 1 շենք թիվ 15 հասցեի բնակարանը հատկացվել է Վարսենիկ Ռազմիկի Ասատրյանի չորս անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, տղային, երեք աղջկան և տրվել թիվ 15 միասնական օրդերը:

Դիմումին կից ներկայացվել է Լենինականի մոսկովյան շրջանային սովետի գործադիր կոմիտեի 1990 թվականի օգոստոսի 23-ի թիվ 14 որոշմամբ տրված թիվ 15 միասնական օրդերը, բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ 2022 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 220651065709 տեղեկանքը, «Նոր Անի» համատիրության 2022 թվականի հոկտեմբերի 13-ի «02» 001 տեղեկանքը, Անահիտ Ազատի Միքայելյանի անձնագրի պատճենը, Վարսենիկ Ռազմիկի Ասատրյանի, Սիմոն Ազատի Ասատրյանի, Ալվարդ Ազատի Ասատրյանի նույնականացման քարտերի պատճենները, Անահիտ Ազատի Միքայելյանի, Վարսենիկ Ռազմիկի Ասատրյանի, Ալվարդ Ազատի Ասատրյանի լիազորագիրը Գյումրի հանայնքից Անի թաղամաս 11 փողոց 1 շենք թիվ 15 հասցեի բնակարանի համապատասխան բաժնեմասերի սեփականության իրավունքի ընդունման պատրաստակամության մասին :

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների,

30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2022 թվականի նոյեմբերի 4-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2022 թվականի դեկտեմբերի 1-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Վարսենիկ Ռազմիկի Ասատրյանի լիազորված անձ՝ Իրինա Արամայիսի Եղիազարյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքներ

## II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

ա) Գյումրի համայնքի «Անի» թաղ. 11 փողոց 1 շենք թիվ 15 հասցեի 80.97 (ութսուն ամբողջ իննսունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ 1063285 վկայական):

բ) Գյումրի քաղաքի Անի թաղամաս 11 փողոց 1 շենք թիվ 15 հասցեի բնակարանը 1990 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ Լենինականի մոսկովյան շրջանային սովետի գործադիր կոմիտեի 1990 թվականի օգոստոսի 23-ի թիվ 14 որոշում):

գ) Գյումրի քաղաքի Անի թաղ. 11 փողոց 1 շենք թիվ 15 հասցեի բնակարանում հաշվառված բնակվում են քաղաքացիներ՝ Սիմոն Ազատի Ասատրյանը 1995 թվականից, Մարինե Հրաչիկի Ասատրյանը 2009 թվականից, Վահան Սիմոնի Ասատրյանը 2009 թվականից,Ազատ Սիմոնի Ասատրյանը 2011 թվականից, Վարսենիկ Ռազմիկի Ասատրյանը 2014թվականից, այլ անձանց օգտագործման և տիրապետման իրավունքներ գրանցված չեն (հիմք՝ բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ 2022 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 220651065709 , «Նոր Անի» համատիրության 2022 թվականի հոկտեմբերի 13-ի «02» 001 տեղեկանքը տեղեկանքներ):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ Վարսենիկ Ռազմիկի Ասատրյանի, Սիմոն Ազատի Ասատրյանի, Ալվարդ Ազատի Ասատրյանի, Անահիտ Ազատի Միքայելյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ և նրանց կողմից 1998թ.-ի մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ (հիմք՝ (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2022 թվականի նոյեմբերի 14-ի N ՍS-14112022-99-0300, տեղեկանք):

ե) Քաղաքացի Վարսենիկ Ռազմիկի Ասատրյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Անի թաղ.11 փողոց 1 շենք թիվ 15 հասցեի բնակարանը վարձակալել է 1990 թվականի օգոստոսի 23-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

**2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենցգործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարեցնելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, անհրաժեշտ է քաղաքացի Վարսենիկ Ռազմիկի Ասատրյանի լիազորված անձ՝ Իրինա Արամայիսի Եղիազարյանի դիմումը բավարարել:

## III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Գյումրի համայնքի «Անի» թաղ. 11 փողոց 1 շենք թիվ 15 հասցեի 80.97 (ութսուն ամբողջ իննսունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝

   1) Վարսենիկ Ռազմիկի Ասատրյանին ծնված՝ 1951 թվականին,
   2) Սիմոն Ազատի Ասատրյանին ծնված՝ 1978 թվականին,
   3) Ալվարդ Ազատի Ասատրյանին ծնված՝ 1977 թվականին,
   4) Անահիտ Ազատի Միքայելյանին ծնված՝ 1976 թվականին

   որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել քաղաքացիներ Վարսենիկ Ռազմիկի Ասատրյանի, Սիմոն Ազատի Ասատրյանի, Ալվարդ Ազատի Ասատրյանի, Անահիտ Ազատի Միքայելյանի նվիրատվության պայմանագրի կնքման համար ներկայացուցիչ:
3. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ Վարսենիկ Ռազմիկի Ասատրյանին, Սիմոն Ազատի Ասատրյանին, Ալվարդ Ազատի Ասատրյանին, Անահիտ Ազատի Միքայելյանին:
4. Քաղաքացիներ Վարսենիկ Ռազմիկի Ասատրյանին, Սիմոն Ազատի Ասատրյանին, Ալվարդ Ազատի Ասատրյանին, Անահիտ Ազատի Միքայելյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Վարսենիկ Ռազմիկի Ասատրյանին, Սիմոն Ազատի Ասատրյանին, Ալվարդ Ազատի Ասատրյանին, Անահիտ Ազատի Միքայելյանին պատշաճ կարգով իրազեկման հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

**2022թիվ Գյումրի համայնք** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«06» դեկտեմբերի 2022 թվականի №2664-Ա

## ԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԻ ԶԻՆՀԱՇՄԱՆԴԱՄ ՆԱԽԿԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՊԵՏՅԱՅԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի №1419-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՑՈՒՑԱԿԻՑ ՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### I. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 19-րդ հոդվածի, 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով երկրորդ խմբի զինհաշմանդամ նախկին զինծառայող Արթուր Պետյայի Վարդանյանի մահվան հանգամանքը՝ մահացած 14.03.2021թվականին (հիմք՝ ՀՀ ԱՆ ՔԿԱԳ գործակալության 2022թվականի նոյեմբերի 16-ի №/26.2/50937-2022 գրություն, 2021թվականի մարտի 19-ի №386 մահվան վերաբերյալ ակտի գրանցում, ԲԱ №375063 մահվան վկայական և ՀՀ ոստիկանության ԱՎՎ Գյումրի քաղաքի անձնագրային խմբի 2022թվականի հոկտեմբերի 27-ի №8/63-973 գրություն)հարուցվել է վարչական վարույթ և լսումների օր է նշանակվել 2022 թվականի դեկտեմբերի 01-ին:

### II. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ երկրորդ խմբի զինհաշմանդամ նախկին զինծառայող՝ Արթուր Պետյայի Վարդանյանի մահվան հանգամանքը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2018թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու

մասին» №1419-Ն որոշման հավելվածի 12-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթը՝ (վերացել է օրենքով սահմանված կարգով շահառու համարվելու իրավական հիմքը).

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

**1.Բնակարանային հաշվառումից հանել՝** Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված(մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» №1419-Ն որոշմամբ բնակարանային կարիքավոր շահառուների ամփոփ ցուցակներում հաշվառված երկրորդ խմբի զինհաշմանդամ նախկին զինծառայող՝ Արթուր Պետյայի Վարդանյանին և նրա ընտանիքին

1) **Արթուր Պետյայի Վարդանյանին (ինքը),**
2) **Վարդան Արթուրի Վարդանյանին (տղան),**
3) **Ալբերտ Արթուրի Վարդանյանին (տղան)**

**2.**Մահացած նախկին զինծառայող Արթուր Պետյայի Վարդանյանի ընտանիքին՝ քաղաքացիներ՝ Վարդան Արթուրի Վարդանյանին և Ալբերտ Արթուրի Վարդանյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:

**3.**Սույն որոշումն ուժի մեջ է մտնում մահացած նախկին զինծառայող՝ Արթուր Պետյայի Վարդանյանի ընտանիքին՝ քաղաքացիներ՝ Վարդան Արթուրի Վարդանյանին և Ալբերտ Արթուրի Վարդանյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

05.12.2022

X

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2022թ. Գյումրի համայնք**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«06» դեկտեմբերի 2022 թվականի № 2663-Ա

### ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ, ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի №1419-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### I ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Հարություն Վոլոդյայի Մկրտչյանը (անձնագիր՝ AS0352193, տրված՝ 28.08.2018թ. 016-ի կողմից, հաշվառված ք.Գյումրի Անի թաղամաս 13 փողոց 7բ շենք, թիվ 8 հասցեի բնակարանում), (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր) 2022թվականի նոյեմբերի 02-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով իրեն և իր երկու որդիներին, Դավիթ Հարությունի Մկրտչյանին (ծնված՝29.11.2019թ.) ու Արսեն Հարությունի Մկրտչյանին (ծնված՝05.12.2021թ.),(3անձ) սահմանված կարգով, որպես 1-ին խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողի ընտանիքի բնակարանային պայմանների բարելավման կարիքավոր ճանաչելու և հաշվառման վերցնելու Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թվականի դեկտեմբերի 6-ի №1419-Ն որոշմամբ հաստատված ցուցակում:

Դիմումին կից ներկայացվել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զինծառայողների առողջապահական, սոցիալական պաշտպանության և վետերանների հարցերով գլխավոր վարչության 2021 թվականի հունիսի 28-ի №36/4532 տեղեկանքի, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2021 թվականի մայիսի 21-ի №1512326 բժշկասոցիալական փորձաքննական որոշման և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի 2021թվականի ապրիլի 03-ի №223 եզրակացության պատճենները, Հարություն Վոլոդյայի Մկրտչյանի անձնագրի, ծննդյան վկայականի, զինգրքույկի, ամուսնության ակտի գրանցման վերաբերյալ տեղեկանքի պատճենները, Դավիթ Հարությունի Մկրտչյանի և Արսեն Հարությունի Մկրտչյանի ծննդյան, հայրության որոշման մասին վկայականների պատճենները, Սեդա Սերգեյի Կրաբաշյանի անձնագրի պատճենը, բնակչության պետական ռեգիստրում հաշվառման վերաբերյալ 2022թվականի հոկտեմբերի 20-ի №220169016224, №220169016225, №220169016226, №220169016227 և «Գարուն» համատիրության 2022թվականի հոկտեմբերի 30-ի №128

տեղեկանքները, Գյումրի քաղաքի Անի թաղամաս 13-րդ փողոց 7բ շենք, թիվ 8 հասցեի բնակարանի սեփականության վկայականի պատճենը:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝ 2022թվականի նոյեմբերի 02-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2022 թվականի դեկտեմբերի 01-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են դիմումատուի՝ Հարություն Վոլոդյայի Մկրտչյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

## II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

ա) 1-ին խմբի զինհաշմանդամ Հարություն Վոլոդյայի Մկրտչյանը վնասվածքը ստացել է 2020թվականին հակառակորդի հետ շփման գծում, հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով (հիմք՝ՀՀ ՊՆ ԶԱՍՊ և ՎՀ ԳՎ 28.06.2021թ. №36/4532 տեղեկանք, ՀՀ ԱՍՀ նախարարության ԲՍՓ 21.05.2021թ. №1512326 որոշում և ՀՀ ՊՆ ԿՌԲՀ 03.04.2021թ. №223 եզրակացություն):

բ) Հարություն Վոլոդյայի Մկրտչյանը(ծնված՝ 18.02.1991թ.) և նրա երկու որդիները՝ Դավիթ Հարությունի Մկրտչյանը(ծնված՝ 29.11.2019թ.) և Արսեն Հարությունի Մկրտչյանը(ծնված՝ 05.12.2021թ.), 02/03/2022թվականից հաշվառված բնակվում են ք.Գյումրի Անի թաղամաս 13 փողոց 7բ շենք, թիվ 8 հասցեի բնակարանում: Վերը նշված հասցեում հաշվառված բնակվում է նաև քաղաքացի՝ Սեդա Սերգեյի Կրաբաշյանը (հիմք՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառման վերաբերյալ 20.10.2022թ. №220169016224, №220169016225, №220169016226, №220169016227 և «Գարուն» համատիրության 30.10.2022թ. №128 տեղեկանքներ):

գ) Գյումրի քաղաքի Անի թաղամասի 13-րդ փողոց 7բ շենք, թիվ 8 հասցեի բնակարանը ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով գրանցված է քաղաքացիներ՝ Սերգեյ Լյուդվիգի Կրաբաշյանի և Արմենուհի Ֆերդինանտի Կրաբաշյանի անվամբ(հիմք՝ վկայական №15072021-08-0009):

դ) Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ՝ Հարություն Վոլոդյայի Մկրտչյանի (ծնված՝ 18.02.1991թ.), Դավիթ Հարությունի Մկրտչյանի(ծնված՝ 29.11.2019թ.) և Արսեն Հարությունի Մկրտչյանի(ծնված՝ 05.12.2021թ.) անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ: Քաղաքացիներ Հարություն Վոլոդյայի Մկրտչյանի (ծնված՝ 18.02.1991թ.) անվամբ Շիրակի մարզ համայնք քաղաք Գյումրի Ե. Չարենցի փողոց 13ա շենք թիվ 15 բնակարանի նկատմամբ կատարվել է օտարման գործարք /ամսաթիվ՝ 20.02.2015թ./, իսկ Դավիթ Հարությունի Մկրտչյանի(ծնված՝ 29.11.2019թ.) և Արսեն Հարությունի Մկրտչյանի (ծնված՝ 05.12.2021թ.)անվամբ օտարման գործարք չի կատարվել (հիմք՝ՀՀ կադաստրի կոմիտեի 31/10/2022թ. №ՄՏ-31102022-99-0153 տեղեկանք):

## III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի

դեկտեմբերի 6-ի «ՀՀ ՊՆ համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» №1419-Ն որոշման դրույթներով.

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ**

**1.**1-ին խմբի զինհաշմանդամ Հարություն Վոլոդյայի Մկրտչյանի ընտանիքին՝ վերցնել հաշվառման Հայաստանի Հանրապետության Կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության Պաշտպանության Նախարարության համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» №1419-Ն որոշմամբ հաստատված ցուցակում.

1) **Հարություն Վոլոդյայի Մկրտչյանին (ինքը), ծնված՝ 1991թվականին,**
2) **Դավիթ Հարությունի Մկրտչյանին (որդին), ծնված՝ 2019թվականին,**
3) **Արսեն Հարությունի Մկրտչյանին (որդին), ծնված՝ 2021թվականին**

**2.**Քաղաքացիներ՝ Հարություն Վոլոդյայի Մկրտչյանին, Դավիթ Հարությունի Մկրտչյանին և Արսեն Հարությունի Մկրտչյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:

**3.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Հարություն Վոլոդյայի Մկրտչյանին, Դավիթ Հարությունի Մկրտչյանին և Արսեն Հարությունի Մկրտչյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

05.12.2022

X

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2022թ. Գյումրի համայնք**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«06» դեկտեմբերի 2022 **թվական** N2662-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԷՄՄԱ ՍԱՄՎԵԼԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## I ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Էմմա Սամվելի Հովհաննիսյանը (անձնագիր՝ AT 0495868, տրված՝ 26.05.2020թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք.Գյումրի Մ.Ավետիսյան փողոց, 21 շենք 36 բնակարան հասցեում), (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2022 թվականի նոյեմբերի 28-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Մ.Ավետիսյան 21 շենք թիվ 36 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իրեն որպես սեփականություն:

Մոսկովյան շրջանային սովետի գործադիր կոմիտեի 1990 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 16 որոշմամբ Մինաս Ավետիսյանի 21 շենքի թիվ 36 բնակարանը հատկացվել է Սիրվարդ Գուրգենի Հովհաննիսյանի 2 անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն և աղջկան և տրվել թիվ 36 միասնական օրդերը:

Քաղաքացի Սիրվարդ Գուրգենի Հովհաննիսյանը մահացել է 2022 թվականի օգոստոսի 18-ին (հիմք՝մահվան վկայական ԲԼ 600821):

Դիմումին կից ներկայացվել է Մոսկովյան շրջանային սովետի գործադիր կոմիտեի 1990 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 16 որոշմամբ տրված թիվ 36 միասնական օրդերը, բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ 2022 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 220169016236 և «Նոր Անի» համատիրության 2022 թվականի նոյեմբերի 8-ի «02» 001 2022թ. տեղեկանքները, Էմմա Սամվելի Հովհաննիսյանի անձնագրի պատճենը:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2022 թվականի նոյեմբերի 28 -ին հարուցվել է

վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2022 թվականի դեկտեմբերի 1-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Էմմա Սամվելի Հովհաննիսյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

## II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

ա) Գյումրի համայնքի Մ.Ավետիսյանի փող. 21 շենք թիվ 36 հասցեի 44.21 (քառասունչորս ամբողջ քսանմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով գրանցված է Գյումրի համայնքի անվամբ (հիմք՝ 1376018 վկայական):

բ) Գյումրի համայնքի Մ.Ավետիսյանի 21 շենք թիվ 36 հասցեի բնակարանը 1990 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ Մոսկովյան շրջանային սովետի գործադիր կոմիտեի 1990 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 16 որոշում ):

գ) Գյումրի համայնքի Մ.Ավետիսյան փ. 21 շենք թիվ 36 հասցեի բնակարանում հաշվառված բնակվում են քաղաքացիներ՝ Էմմա Սամվելի Հովհաննիսյանը 2005 թվականից, Գոհար Գրիգորի Մելիքյանը 2011 թվականից, Արշակ Արմանի Խաչատրյանը 2013 թվականից, Մարիամ Արմանի Խաչատրյանը 2016 թվականից, այլ անձանց օգտագործման և տիրապետման իրավունքներ գրանցված չեն (հիմք՝ բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ 2022 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 220169016236 և «Նոր Անի» համատիրության 2022 թվականի նոյեմբերի 8-ի «02» 001 2022 տեղեկանքներ):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացի Էմմա Սամվելի Հովհաննիսյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թ.մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացու կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի ձեռքբերման կամ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ (հիմք՝ 2022 թվականի նոյեմբերի 9-ի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ N ԱՏ-09112022-99-0068 տեղեկանք):

ե) Քաղաքացի Էմմա Սամվելի Հովհաննիսյանի ընտանիքը Գյումրի համայնքի Մ.Ավետիսյանի 21 շենք թիվ 8 հասցեի բնակարանը վարձակալել է 1990 թվականի սեպտեմբերի 27-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

**2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության

կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, անհրաժեշտ է քաղաքացի Էմմա Սամվելի Հովհաննիսյանի դիմումը բավարարել:

## III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ,24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

# ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գյումրի համայնքի Մ.Ավետիսյանի փող. 21 շենք թիվ 36 hասցեի 44.21 (քառասունչորս ամբողջ քսանմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝

   1) Էմմա Սամվելի Հովհաննիսյանին ծնված՝ 1989 թվականին որպես սեփականություն:

2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել քաղաքացի Էմմա Սամվելի Հովհաննիսյանի հետ նվիրատվության պայմանագրի կնքման համար ներկայացուցիչ:
3. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի Էմմա Սամվելի Հովհաննիսյանին :
4. Քաղաքացի Էմմա Սամվելի Հովհաննիսյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Էմմա Սամվելի Հովհաննիսյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

X

**2022թիվ Գյումրի համայնք** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


# ՈՐՈՇՈՒՄ

«06» դեկտեմբերի 2022 թվական N 2661-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԼԻԼԻԹ ՇՈՒՐԱՅԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ,ԳԵՎՈՐԳ ՇՈՒՐԱՅԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### I ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Լիլիթ Շուրայի Խաչատրյանը (անձնագիր՝ AR 0447420, տրված՝ 06.09.2017թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի Տ.Ճարտարապետի 28 շենք 7 բնակարան հասցեում), (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2022 թվականի նոյեմբերի 14-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով ք. Գյումրի Տ.Ճարտարապետ 28 շենք թիվ 7 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Լենինականի մոսկովյան շրջանային սովետի գործադիր կոմիտեի 1990 թվականի օգոստոսի 23-ի թիվ 14 որոշմամբ Տրդատ Ճարտարապետի 28 շենք թիվ 7 հասցեի բնակարանը հատկացվել է Ծովիկ Գեղևոնի Խաչատրյանի երեք անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, աղջկան, տղային և տրվել թիվ 7 միասնական օրդերը:

Քաղաքացի՝ Ծովիկ Գեղևոնի Խաչատրյանը մահացել է 2022 թվականի հունիսի 14-ին (հիմք՝ ԲԱ 569764 մահվան վկայական):

Դիմումին կից ներկայացվել է Լենինականի մոսկովյան շրջանային սովետի գործադիր կոմիտեի 1990 թվականի օգոստոսի 23-ի թիվ 14 որոշմամբ տրված թիվ 7 միասնական օրդերը, բնակչության պետական ռեգիստրում հաշվառման վերաբերյալ 2022 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 22030030403, 2022 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 220163016382 տեղեկանքները, «Բարեկամություն» համատիրության 2022 թվականի նոյեմբերի 14-ի N 0/94 տեղեկանքը, Լիլիթ Շուրայի Խաչատրյանի,Գևորգ Շուրայի Խաչատրյանի անձնագրերի պատճենները :

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2022 թվականի նոյեմբերի 14-ին հարուցվել է

վարչական վարույթ:
Լսումների օր է նշանակվել 2022 թվականի դեկտեմբերի 1-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:
Լսումներն իրականացվել են քաղաքացի Լիլիթ Շուրայի Խաչատրյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

## II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

ա) Գյումրի համայնքի Տ.Ճարտարապետ 28 շենք թիվ 7 հասցեի 60.16 (վաթսուն ամբողջ տասնվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ 1065547 վկայական):

բ) Գյումրի քաղաքի Տրդատ Ճարտարապետի 28 շենք թիվ 7 հասցեի բնակարանը 1990 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ Լենինականի մոսկովյան շրջանային սովետի գործադիր կոմիտեի 1990 թվականի օգոստոսի 23-ի թիվ 14 որոշում):

գ) Գյումրի քաղաքի Տ.Ճարտարապետի փողոց 28 շենք թիվ 7 հասցեում հաշվառված բնակվում է քաղաքացի՝ Լիլիթ Շուրայի Խաչատրյանը 2003 թվականից, այլ անձանց օգտագործման և տիրապետման իրավունքներ գրանցված չեն:Քաղաքացի Գևորգ Շուրայի Խաչատրյանը 2020 թվականից հաշվառված է Շիրակ Ախուրյան Վահրամաբերդ 9 փողոց 9 տուն հասցեում (հիմք՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառման վերաբերյալ 2022 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 22030030403, 2022 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 220163016382, «Բարեկամություն» համատիրության 2022 թվականի նոյեմբերի 14-ի N 0/94 տեղեկանքներ):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ Լիլիթ Շուրայի Խաչատրյանի, Գևորգ Շուրայի Խաչատրյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998 թվականի մարտի 1-ից առ այսօր նրանց կողմից կնքված անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում Հայաստանի Հանրապետությունում կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2022 թվականի նոյեմբերի 9-ի N ԱՏ-09112022-99-0090, N ԱՏ-09112022-99-0307 տեղեկանքներ):

ե) Քաղաքացի Լիլիթ Շուրայի Խաչատրյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Տ.Ճարտարապետ փողոց 28 շենք թիվ 7 հասցեի բնակարանը վարձակալել է 1990 թվականի օգոստոսի 23-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

**2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել

քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանգիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, անհրաժեշտ է քաղաքացի Լիլիթ Շուրայի Խաչատրյանի դիմումը բավարարել:

## III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի,

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գյումրի համայնքի Տ.Ճարտարապետ 28 շենք թիվ 7 հասցեի 60.16 (վաթսուն ամբողջ տասնվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝

1) Լիլիթ Շուրայի Խաչատրյանին ծնված՝ 1985 թվականին,
2) Գևորգ Շուրայի Խաչատրյանին ծնված՝ 1986 թվականին

որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել քաղաքացիներ Լիլիթ Շուրայի Խաչատրյանի, Գևորգ Շուրայի Խաչատրյանի նվիրատվության պայմանագրի կնքման համար ներկայացուցիչ:
3. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ Լիլիթ Շուրայի Խաչատրյանին,Գևորգ Շուրայի Խաչատրյանին:
4. Քաղաքացներ Լիլիթ Շուրայի Խաչատրյանին,Գևորգ Շուրայի Խաչատրյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Լիլիթ Շուրայի Խաչատրյանին,Գևորգ Շուրայի Խաչատրյանին պատշաճ կարգով իրազեկման հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

**2022թիվ Գյումրի համայնք** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«06» <u>դեկտեմբերի </u>2022 թվականի N 2660 -Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 2200-Ա ՈՐՈՇՈՒՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի թվով 6 (վեց) ստորաբաժանումների աշխատանքների համակարգումը գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արթուր Ռուդիկի Պապիկյանին վերապահելու և Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի ապրիլի 28-ի N 911-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 2200-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը
   1) որոշման վերնագրում և 1-ին կետում «6 (վեց)» թիվը և բառը փոխարինել «7 (յոթ)» թվով և բառով,
   2) որոշման 1-ին կետը լրացնել հետևյալ նոր ենթակետով.
   «7) ծրագրերի և արտաքին կապերի»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արթուր Պապիկյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

06.12.2022

X

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք. Գյումրի,2022 թվական**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«05» դեկտեմբերի 2022 թվականի №2659Ա

## ԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԻ ԶԻՆՀԱՇՄԱՆԴԱՄ ՆԱԽԿԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ՝ ԱՆՈՒՇԱՎԱՆ ԲԱԲԿԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի №1419-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՑՈՒՑԱԿԻՑ ՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### I. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 19-րդ հոդվածի, 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով երկրորդ խմբի զինհաշմանդամ նախկին զինծառայող Անուշավան Բաբկենի Հովհաննիսյանի մահվան հանգամանքը՝ մահացած 28.01.2020թվականին (հիմք՝ ՀՀ ԱՆ ՔԿԱԳ գործակալության 2022թվականի նոյեմբերի 28-ի №52843-2022 գրություն, 2020թվականի հունվարի 29-ի №132 մահվան վերաբերյալ ակտի գրանցում, ԲԱ №216137 մահվան վկայական)հարուցվել է վարչական վարույթ և լսումների օր է նշանակվել 2022 թվականի դեկտեմբերի 01-ին:

### II. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ երկրորդ խմբի զինհաշմանդամ նախկին զինծառայող՝ Անուշավան Բաբկենի Հովհաննիսյանի մահվան հանգամանքը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2018թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» №1419-Ն որոշման հավելվածի 12-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթը՝ (վերացել է օրենքով սահմանված կարգով շահառու համարվելու իրավական հիմքը).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

**1.Բնակարանային հաշվառումից հանել՝** Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված(մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» №1419-Ն որոշմամբ բնակարանային կարիքավոր շահառուների ամփոփ ցուցակներում հաշվառված երկրորդ խմբի զինհաշմանդամ նախկին զինծառայող՝ Անուշավան Բաբկենի Հովհաննիսյանին և նրա ընտանիքին

1) **Անուշավան Բաբկենի Հովհաննիսյանին (ինքը),**
2) **Արփինե Անուշավանի Հովհաննիսյանին (աղջիկը)**

**2.**Մահացած նախկին զինծառայող Անուշավան Բաբկենի Հովհաննիսյանի ընտանիքին՝ քաղաքացի Արփինե Անուշավանի Հովհաննիսյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
**3.**Սույն որոշումն ուժի մեջ է մտնում մահացած նախկին զինծառայող՝ Անուշավան Բաբկենի Հովհաննիսյանի ընտանիքին՝ քաղաքացի՝ Արփինե Անուշավանի Հովհաննիսյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

05.12.2022

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2022թ. Գյումրի համայնք**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«05» դեկտեմբերի 2022 թվականի № 2658-Ա

## ԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԻ ԶԻՆՀԱՇՄԱՆԴԱՄ ՆԱԽԿԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ՝ ԱՐԱ ՌՈՒԲԵՆԻ ՏԻԳՐԱՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի №1419-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՑՈՒՑԱԿԻՑ ՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### I. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 19-րդ հոդվածի, 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով 2-րդ խմբի զինհաշմանդամ նախկին զինծառայող Արա Ռուբենի Տիգրանյանի մահվան հանգամանքը՝ մահացած 01.05.2012թվականին, (հիմք՝ ՀՀ ԱՆ ՔԿԱԳ գործակալության 2022թվականի նոյեմբերի 23-ի №52057-2022 գրություն, 2012թվականի մայիսի 21-ի №684 մահվան վերաբերյալ ակտի գրանցում, ԱԲ №097392 մահվան վկայական և ՀՀ ոստիկանության ԱՎՎ Գյումրի քաղաքի անձնագրային խմբի 2022թվականի հոկտեմբերի 26-ի №8/63-966 գրություն)հարուցվել է վարչական վարույթ և լսումների օր է նշանակվել 2022 թվականի դեկտեմբերի 01-ին:

### II. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ երկրորդ խմբի զինհաշմանդամ նախկին զինծառայող՝ Արա Ռուբենի Տիգրանյանի մահվան հանգամանքը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2018թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» №1419-Ն որոշման հավելվածի 12-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթը՝ (վերացել է օրենքով սահմանված կարգով շահառու համարվելու իրավական հիմքը).

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ

**1.Բնակարանային հաշվառումից հանել՝** Հայաստանի Հանրապետության Կառավարության 2018թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված(մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» №1419-Ն որոշմամբ բնակարանային կարիքավոր շահառուների ամփոփ ցուցակներում հաշվառված երկրորդ խմբի զինհաշմանդամ նախկին զինծառայող՝

**1) Արա Ռուբենի Տիգրանյանին (ինքը),**

**2.**Մահացած նախկին զինծառայող՝ Արա Ռուբենի Տիգրանյանի ընտանիքին՝ իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:

**3.**Սույն որոշումն ուժի մեջ է մտնում մահացած նախկին զինծառայող՝ Արա Ռուբենի Տիգրանյանի ընտանիքին՝ պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

05.12.2022

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2022թ. Գյումրի համայնք**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«05» նոյեմբերի 2022 **թվական** N2657-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 2012-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով քաղաքացիներ Անահիտ Թաթոսի Ներսիսյանի, Լիլիթ Վահրամի Ներսիսյանի Շիրակ համայնք Գյումրի ք. Պարոնյան փողոց 40 բնակելի տան հաշվառումից հանելու հանգամանքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ,3-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Մարինե Համբարձումի Գրիգորյանի Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված 2022 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 22235-22 թվագրությամբ դիմումը՝

**որոշում եմ.**

1. Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 2012-Ա որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Հանել որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերի «2) Անահիտ Թաթոսի Ներսիսյանին ծնված՝ 1963 թվականին, 3) Լիլիթ Վահրամի Ներսիսյանին ծնված՝ 1987 թվականին » բառերը և թվերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Մարինե Համբարձումի Գրիգորյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից :

Квалифицированная подпись

**2022թիվ Գյումրի համայնք** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«05» դեկտեմբերի 2022 թվականի №2656-Ա

## ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻ ԶԻՆՀԱՇՄԱՆԴԱՄ ՆԱԽԿԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ՝ ՀՐԱՉՅԱ ՍԱՄՎԵԼԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի №1419-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՑՈՒՑԱԿԻՑ ՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### I. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 19-րդ հոդվածի, 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջին խմբի զինհաշմանդամ նախկին զինծառայող Հրաչյա Սամվելի Մանուկյանը 2021թվականի փետրվարի 05-ից մինչ օրս հաշվառված է ք.Երևան Օղեսայի փողոց 2ա շենք թիվ 4/1 հասցեում(հիմք՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության ԱՎ վարչության Գյումրի քաղաքի անձնագրային խմբի 2022թվականի հոկտեմբերի 26-ի №8/63-968 գրություն) և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2018թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» №1419-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 12-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթը (հաշվառման վերցվելուց հետո հանվել են տվյալ համայնքում մշտական հաշվառումից)հարուցվել է վարչական վարույթ, լսումների օր է նշանակվել 2022 թվականի դեկտեմբերի 01-ը:

### II. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջին խմբի զինհաշմանդամ նախկին զինծառայող Հրաչյա Սամվելի Մանուկյանը 2021թվականի փետրվարի 05-ից մինչ օրս հաշվառված է ք.Երևան Օղեսայի փողոց 2ա շենք թիվ 4/1 հասցեում(հիմք՝ Հայաստանի

Հանրապետության ոստիկանության ԱՎ վարչության Գյումրի քաղաքի անձնագրային խմբի 2022թվականի հոկտեմբերի 26-ի №8/63-968 գրություն) և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2018թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների եվ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը եվ չափերը սահմանելու մասին» №1419-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 12-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթը (հաշվառման վերցվելուց հետո հանվել են տվյալ համայքում մշտական հաշվառումից).

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ**

**1.Բնակարանային հաշվառումից հանել՝** Հայաստանի Հանրապետության Կառավարության 2018թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված(մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» №1419-Ն որոշմամբ բնակարանային կարիքավոր շահառուների ամփոփ ցուցակներում հաշվառված առաջին խմբի զինհաշմանդամ նախկին զինծառայող Հրաչյա Սամվելի Մանուկյանին և նրա ընտանիքին.

**1) Հրաչյա Սամվելի Մանուկյանին (ինքը),**
**2) Նինա Լյուդվիգի Մանուկյանին (մայրը),**
**3) Սամվել Բագրատի Մանուկյանին (հայրը),**

**2.** Քաղաքացիներ՝ Հրաչյա Սամվելի Մանուկյանին, Նինա Լյուդվիգի Մանուկյանին և Սամվել Բագրատի Մանուկյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
**3.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ՝ Հրաչյա Սամվելի Մանուկյանին, Նինա Լյուդվիգի Մանուկյանին և Սամվել Բագրատի Մանուկյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

05.12.2022

X

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2022թ. Գյումրի համայնք**